ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 42/111-Լ «29» 02 2024 թ.

ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության արդյունքների բողոքարկման գործընթացը կանոնակարգելու նպատակով և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. Սահմանել, որ

1.1. Ընթացիկ քննության, ընթացիկ ստուգման, ինքնուրույն աշխատանքի, ստուգարքի և եզրափակիչ քննության գնահատականն ուսանողի համալսարանական էլեկտրոնային փոստին ուղարկվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում տեխնիկական վրիպակ (քննության ժամանակ ստացած գնահատականի և «Ռեգիստրար» համակարգում ամրագրված գնահատականի տարբերություն) հայտնաբերելու դեպքում ուսանողն այդ մասին տեղեկացնում է գնահատումն իրականացրած դասախոսին կամ ուսումնական ստորաբաժանման գրասենյակի ղեկավարին:

1.2. Ուսանողն իրավունք ունի բողոքարկելու իր գնահատականը ընթացիկ քննության, ընթացիկ ստուգման, ինքնուրույն աշխատանքի, ստուգարքի և եզրափակիչ քննության գնահատականը հրապարակելու օրը (պատասխանի բովանդակություն և նշանակված գնահատականի առերևույթ անհամապատասխանություն)՝ դիմելով գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին: Վերջիններիս որոշման հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը ուսանողը գրավոր կամ էլեկտրոնային եղանակով (համալսարանական էլեկտրոնային փոստով) կարող է դիմել դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին կամ ուսումնական ստորաբաժանման (ֆակուլտետ, կենտրոն, ինստիտուտ) ղեկավարին:

Առցանց եղանակով անցկացվող քննության արդյունքի բողոքարկման դիմումն ուղարկվում է համալսարանական էլեկտրոնային փոստով:

1.3. Գրավոր քննության բողոքարկման դիմումի քննարկումը կազմակերպվում է մեկօրյա ժամկետում: Քննարկմանը մասնակցում են գնահատումն իրականացրած դասախոսը կամ քննական հանձնաժողովը, ըստ անհրաժեշտության՝ նաև ուսումնական ստորաբաժանման ղեկավարը կամ գրասենյակի ղեկավարը:

1.4. Բանավոր քննության բողոքարկումը կազմակերպվում է առանց լսարանից դուրս գալու: Բողոքարկմանը մասնակցում են գնահատումն իրականացրած դասախոսը կամ քննական հանձնաժողովը, ըստ անհրաժեշտության՝ նաև ուսումնական ստորաբաժանման ղեկավարը կամ գրասենյակի ղեկավարը:

1.5. Բողոքարկման արդյունքում՝

1) գնահատականը կարող է մնալ անփոփոխ,

2) գնահատականը կարող է բարձրացվել,

3) գնահատականը կարող է իջեցվել:

1.6. Բողոքարկման արդյունքում ընդունված որոշումն ուսումնական ստորաբաժանման գրասենյակի կողմից ուղարկվում է ուսանողի և Ուսումնամեթոդական վարչության համալսարանական էլեկտրոնային փոստերին:

1.7. Քննության արդյունքի բողոքարկումից, ինչպես նաև սույն հրամանի 1.1 և 1.2 կետերում նշված ժամկետների ավարտից հետո ուսանողի գնահատականը փոփոխման ենթակա չէ:

2. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին և սովորողներին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ռեկտոր Հ. Հովհաննիսյան